

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

1975 թ. հունիսի 28-ից մինչև հուլիսի 31-ը հյուսիսային Իտալիայի Բերգամո քաղաքում կայացավ հայկական արվեստի պատմությանը նվիրված առաջին միջազգային գիտաժողովը, որ կազմակերպել էին Բերգամոյի համալսարանը, Միլանի սյուլիտեխնիկումի ճարտարապետական ֆակուլտետի հումանիտար գիտությունների ինստիտուտը և Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիան։ Գիտաժողովի թեման էր հայ միջնադարյան արվեստը և ճարտարապետությունը (սկսած բրոնզի դարից մինչև ուշ միջնադար)։ Հրավիրված էին Սովետական Միության, Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Լիբանանի և այլ երկրների 120 գիտնականներ, որոնք տարբեր բաժանմունքներում կարդացին 60 զեկուցում։

Բերգամոյում գիտաժողովին նախորդել էր «Հայկական շաբաթը», որի ընթացքում ընթերցվել էին բազմաթիվ զեկուցումներ հայ ժողովրդի պատմության և արվեստի մասին։ Բացի այդ, կազմակերպվել էր հայ կիրառական արվեստի նմուշների ցուցահանդես, ուր տեղ էին գտել նաև հայ արվեստին և ճարտարապետությանը նվիրված հրատարակությունները։

Գիտաժողովի բացումից առաջ տեղի ունեցավ հատուկ հարցազրույց, որտեղ հանդես եկան կազմակերպող կողմերի պաշտոնական ներկայացուցիչները, ինչպես նաև «Ունիտա» և այլ թերթերի թղթակիցները։ Իտալական մամուլի մի շարք օրգաններ հրապարակեցին գիտաժողովի աշխատանքները լուսաբանող հոդվածներ։ Բացման արարողությանը մասնակցում էին Իտալիայի արտարին գործերի մինիստրության ներկայացուցիչ ղոկտոր Զերկիոնին և Իտալիայում Սովետական Միության դեսպանության մշակութային գծով կցորդ Կաբանենկոն։ Ընթերցվեցին ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ ակադ. Վ. Համբարձումյանի, Իտալիայի արտաքին գործերի մինիստր Մարիանո Ռումորի և Ամենայն հայոց կաթողիկոս Վաղգեն I-ի ողջույնի ուղերձները։

Նույն օրվա երկրորդ կեսին սկսվեցին գիտաժողովի բաժանմունքների աշխատանքները։ Սովետական պատվիրակության անդամները հանդես եկան զեկուցումներով, որոնք ընդգրկում էին Ուրարտուից մինչև ուշ միջնադար ընկած ժամանակաշրջանը և նվիրված էին ինչպես բազարաշինական հարցերին (Կ. Ղաֆադարյան՝ «Արդիչտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը»), այնպես էլ պատմական հուշարձաններին

առանձին տիպերին և կոմպլեքսներին։ Այսպես, եռանավ և միանավ բազիլիկաներին էին նվիրված Ա. Սահեյանի և Մ. Հասրաբյանի զեկուցումները, ընդ որում Ա. Սահեյանը հաղորդում արեց նաև Գառնիի տաճարի վերականգնման մասին, թեև հայկական հելլենիզմի պրորիմը ընդգրկված չէր գիտաժողովի թեմատիկայում։ Բաղարսենատիպ հուշարձանների մասին խոսեց Ա. Զարյանը, իսկ Ս. Մնացականյանի զեկուցման նյութն էր հայկական վանական կոմպլեքսների զարգացման և կազմավորման ընթացքը։ Հայ միջնադարյան արվեստին նվիրված զեկուցումներով հանդես եկան Բ. Առաքելյանը («Վաղ միջնադարյան հայկական խճանկարը»), Տ. Իզմայլովան («XI դարի հայկական մանրանկարչական դպրոցները») և Ն. Ստեփանյանը («Հայ միջնադարյան կիրառական արվեստը»)։ Կարդացվեցին Ն. Տոկարսկու («Իշխանի տաճարի մասին») և Հ. Խալիֆաշյանի («Հայկական աշխարհիկ ճարտարապետությունը») զեկուցումները։

Բազմաթեմա էին և լայն ընդգրկում ունեին տարբեր երկրներից ժամանած գիտնականների, ինչպես նաև իտալական հետազոտողների զեկուցումները, որոնցից հատկապես հետաքրքիր էին Արևմտյան Հայաստանի մի շարք հուշարձանների հետազոտության արդյունքը հանդիսացող նյութերը։ Մ. Տիբերիի զեկուցումը նվիրված էր Վասպուրականում Հոփսիմեատիպ մի նորահայտ տաճարի, որ նա թվագրում է VII դարի 30-ական թթ.։ Ոչ պակաս ուշագրավ էր Թոմազո Բրելլիա Ֆրատոկիի զեկուցումը Վանա լճի կիժ, Կտուց և Արտեր մենաստանների մասին, ինչպես նաև Պաոլո Կունեոյի զեկուցումը հայ միջնադարյան ճարտարապետական դպրոցների վերաբերյալ։

Մի շարք զեկուցումներ նվիրված էին ճարտարապետության պատմության տարբեր պրոբլեմներին և առանձին հուշարձաններին։ Այսպես, Բեյրութի համալսարանի պրոֆեսոր Հ. Կալայանը զեկուցեց տարբեր ճարտարապետական դպրոցներում տեղ գտած համաշափական սիստեմների մասին, հայկական հուշարձանների կառուցողական մեթոդները մեկնաբանելով երկրաչափական ձևերի տարբեր համադրությունների միջոցով և զուգահեռներ տեսնելով նաև անտիկ ճարտարապետության ոլորտներում։ Դոկտոր Հարություն Ղազանչյանի (Միլան) զեկուցման մեջ ցույց էր տրվում Զվարթնոցի երկրորդ հարկաբաժնի ոտտոնդաձև պատի նշանակությունը ողջ հուշարձանի կայունության հարցում։ Ուշագրավ

էին Հերման Վահրամյանի՝ միջնադարյան վանական հաստատութիւնների և դ-ր Տ. Սկալեսսի՝ Խորակերտի մասին գեկուցումները:

Գիտաժողովում կարգացված գեկուցումների մի մասը նվիրված էր ճարտարապետության և արվեստի բնագավառում եղած առնչությունների և կապերի վերլուծությանը, ընդ որում հիմնականում շոշափվում էին Հայաստանի և Արևմուտքի երկրների մշակութային առնչությունները բրոնզի դարից մինչև միջնադար: Դրանցից էին Կ. Դոնոնի (Փարիզ) գեկուցումը (սրբոցական Հայաստանը և Կովկասը), պրոֆ. Մ. Շահինի (Լոնդոն) գեկուցումը ուրարտական բրոնզի մասին և այլն: Մի շարք գեկուցումներ նվիրված էին հայ-բալկանյան, հայ-բուլղարական և հայ-հարավսլավական արվեստների առնչություններին: Այսպես, պրոֆ. Զ. Իոնեսկուի (Բուխարեստ) ելույթը վերաբերում էր հայ-ուլմիական մշակութային կապերին, պրոֆ. Պ. Միրովիչինը (Բելգրադ)՝ հայ և սերբ ժողովուրդների, իսկ պրոֆ. Ս. Բոյաչիևինը (Սոֆիա)՝ հայ-բուլղարական ճարտարապետական առնչություններին:

Զեկուցումների մի մասը նվիրված էր հայ-իտալական մշակութային առնչությունների պրոբլեմին: Այդպիսիք էին պրոֆ. Ֆ. Բիանկիի (Վենետիկի առնչությունը Լոմբարդիայում), պրոֆ. Զ. Ռոկիի (Վենետիկում հարաբերական ճարտարապետական առնչությունները), դոկտոր Լեոն Զեքլանի (Ետալիայում հայկական զաղթողների և հայ-իտալական մշակութային առնչությունների մասին) գեկուցումները: Ուշագրավ էր պրոֆ. Դ. Դի-Բերնարդի-Ֆերրերոյի գեկուցումը խաչվող կամարների և հատկապես Կազալե Մոնֆերատի Ս. էվագիո եկեղեցու գավթի խաչվող կամարների մասին. հեղինակի կարծիքով վեր-

ջիններս անմիջական կապ ունեն հայկական միջնադարյան խաչվող կամարների հետ:

Առանձին խումբ էին կազմում Հարավային Իտալիայի հայկական բնակավայրերում պահպանված հուշարձաններին նվիրված գեկուցումները: Դրանցից էին պրոֆ. Վ. Զիլլի (Վենետիկ) և պրոֆ. Ս. Գրիգոր Եկեղեցին Նեապոլում» և պրոֆ. Ս. Մարիանի-Կարլոյի (Պոլիցի շրջանը և Կովկասյան մշակույթը) գեկուցումները: Այս շարքին էին պատկանում նաև մի շարք այլ հաղորդումներ:

Զգալի թիվ էին կազմում ընդհանրապես արվեստին և մասնավորապես կիրառական արվեստին նվիրված գեկուցումները: Ուշագրավ էր Դեվիդ Լանգի (Լոնդոն) գեկուցումը Հայաստանի և Վրաստանի միջնադարյան դրամների մասին: Արվեստագիտական գեկուցումների գերակշռող մասը վերաբերում էր հայ-ավրոպական առնչություններին, ընդ որում առավել լայն ձևով բննարկվում էին հայ-բալկանյան կապերը (Զ. Իոնեսկու (Բուխարեստ), Վենետիկական առնչությունները արվեստի բնագավառում», պրոֆ. Ժ. Բլանկոֆֆ (Բրյուսել), Վենետիկում արվեստի առնչությունները Վադիմիր Սուզդալի հուշարձանների հետ», Ն. Տիեր՝ Պադուայի պատկերազրույթյան վերապրուկները Վասպուրականում», Լ. Կույումջյան (Բեյրութ), «Կենդանակերպերի մասին հայ մանրանկարչության մեջ»):

Գիտաժողովում կարգացված գեկուցումները լսվում էին մեծ ուշադրությամբ: Դրանք հրատարակվելու են առանձին հատորով:

ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒՅԱՆ ՂՈՒՄՈՐ
Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԼՈՒԴՄԻԱ ՄՈՏԱԼՈՎԱ

Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում վախճանվեց հայ գրականության ու մշակույթի անկեղծ բարեկամ, շեխ հայագետ, թարգմանիչ Լուդմիլա Մոտալովան:

Լուդմիլա Մոտալովան այսպիսի աչք հայագետներից էր, որ ամբողջովին նվիրվել էր հայ ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրմանն ու պրոպագանդաներ: Գրականագիտական, լեզվաբանական ու արվեստաբանական իր խոր գիտելիքները նա ծառայեցնում էր հայոց լեզվի, հայ հին ու ժամանակակից գրականության գիտական խնդիրների լուծման գործին, իր լավագույն թարգմանություններով օժանդակում հայ և շեխ ժողովուրդ-

ների ավելի խոր փոխըմբռնմանն ու բարեկամության ամրապնդմանը:

Լուդմիլա Մոտալովան ծնվել է 1935 թ., բժշկի բնտանիքում: Մանկության հարուստ գրադարանը մանկական տարիներից նրան կապել է գրքերի աշխարհին: Հայ ժողովրդի նկատմամբ հետաքրքրությունը նրա մեջ առաջացել է աշակերտական տարիներին, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպից և խորացել Պրագայի Կարելի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում ուսանելիս: Հենց այդ համալսարանի արևելագիտության բաժնում էլ, Յարոմիր Նդլիշկայի մոտ նա սովորել է հայերեն: Բացի հայերենից, Մոտալովան տիրապե-